Հաստատուն ճշգրտվող տոկոսադրույքի ($S_ճ$) հաշվարկման մեթոդաբանություն և

ճշգրտման ընթացակարգ

Հաստատուն ճշգրտվող տոկոսադրույքի ($S_ճ$) հաշվարկման համար կիրառվող

ՓՈՓՈԽՈՒՆ ԲԱՂԱԴՐԻՉ ($S_փ$)

Արժույթ	($S_փ$)	Սահմանման/Փոփոխման ամսաթիվ	Ուժի մեջ է մինչև
ԱՄՆ դոլար	2.2	01.08.2019	31.07.2020թ.
ԱՄՆ դոլար	0.4	01.08.2020	31.07.2021թ.

Փոփոխուն բաղադրիչը ($S_փ$) հաշվարկվում է յուրաքանչյուր տարվա հուլիս ամսին, ընդ որում.

1. որպես հիմնական ցուցանիշ հիմք է ընդունվում տվյալ ամսվան նախորդող ամսվա վերջին բանկային օրվա (Հայաստանի Հանրապետությունում և Լոնդոնում (Մեծ Բրիտանիա) միաժամանակ) ԱՄՆ դոլարով 6 ամիս ժամկետայնությամբ Լոնդոնի Միջբանկային Առաջարկի Տոկոսադրույքը (ICE LIBOR USD 6 Month), կլորացնելով ստորակետից հետո մինչև 1 /մեկ/ թվի ճշտությամբ:

   (ICE LIBOR USD 6 Month) տոկոսադրույքի տվյալների աղբյուր կարող է հանդիսանալ www.global-rates.com կայքում հրապարակված տեղեկատվությունը:

2. որպես երկրորդային ցուցանիշ հիմք է ընդունվում տվյալ ամսվան նախորդող ամսվա համար ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հրապարակված առևտրային բանկերի կողմից «մեկ տարուց ավելի» ժամկետով ներգրավված ավանդների միջին կշռված տոկոսադրույքը ԱՄՆ դոլարի համար, կլորացնելով ստորակետից հետո մինչև 1 /մեկ/ թվի ճշտությամբ:

   ԱՄՆ դոլարի համար «մեկ տարուց ավելի» ժամկետով ներգրավված ավանդների միջին կշռված տոկոսադրույքը հրապարակվում է Կենտրոնական բանկի

պաշտոնական կայքէջի «Դրամավարկային և Ֆինանսական վիճակագրություն» բաժնում՝

https://www.cba.am/am/SitePages/statmonetaryfinancial.aspx

Փոփոխուն բաղադրիչը հաշվարկելիս կիրառվում են մաթեմատիկական կլորացման կանոնները՝ օրինակ, եթե 2.14% է, ապա դիտվում է 2.1%, իսկ 2.15% դիտվելու է 2.2%:

Այն դեպքում, երբ հիմնական ցուցանիշը դառնում է անհասանելի և անհնարին է դառնում հաստատուն տոկոսադրույքի ճգրտումը հաջորդ ժամանակահատվածի համար, ապա հաստատուն տոկոսադրույքի ճգրտումը հաջորդ ժամանակաշրջանի համար սահմանվում է հիմք ընդունելով երկրորդային ցուցանիշը:

Հաստատուն ճշգրտվող տոկոսադրույքը ենթակա է ճգրտման հետևյալ բանաձևով.

$S_ճ = S_հ + S_փ$

որտեղ՝

$S_ճ$ – Հաստատուն ճգրտված տոկոսադրույք,

$S_հ$ – Հաստատուն բաղադրիչ

$S_փ$ – Փոփոխուն բաղադրիչ,

Հաստատուն բաղադրիչի չափը (տոկոսը) սահմանվում է 8%:

Վարկի տոկոսադրույքը ճգրտվում է.

1. Առաջին անգամ տրամադրմանը հաջորդող 36-րդ ամսից անց առաջիկա ճշգրտման ամսաթվին (հոկտեմբեր ամսվա առաջին աշխատանքային օրը),
2. Առաջին ճշգրտումից հետո յուրաքանչյուր տարի ճշգրտման ամսաթվին, եթե հրապարակված փոփոխուն բաղադրիչը ($S_փ$) տարբերվում է վարկի տվյալ պահին գործող տոկոսադրույքի և հաստատուն բաղադրիչի տարբերությունից ավելի քան 0.4 տոկոսային կետով:

Վարկի հաստատուն ճշգրտվող տոկոսադրույքի նվազագույն և առավելագույն շեմերը համապատասխանաբար սահմանվում են՝ Վարկի տրամադրման պահին սահմանված տոկոսադրույք ± 4%: